ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԾՁԲ-21-20/2-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

15-ը ապրիլի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Սլացք» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Ա. Ահարոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 15.02.2021թ. կնքված № ԳՀԾՁԲ-21-20/2-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության առավելագույն գինը /գումարը/ ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի առավելագույն գինը կազմում է **24 000 000 (քսանչորս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,** որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ. (Հավելված N 2):

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ ինժեներական զորքերի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Սլացք» ՓԲԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Վանաձոր, Թևոսյան 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ,
գործառնական վարչություն	Հ/Հ 220053333435000
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 06901582
ՀՎՀՀ 02522157	Գլխավոր տնօրեն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ

Հավելված N 1
№ ԳՀԾՁԲ-21-20/2-2 գնման պայմանագրի
N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ծառայությունների անվանումը	Չ/մ	Քանակը	Առավելագույն գինը /գումարը/ (ՀՀ դրամ)	Ծառայությունների մատուցումը ըստ եռամսյակների
					3-ից 4-րդ եռամսյակներ, բայց ոչ ուշ քան 30.11.2021թ.
1	**Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ** //Հատուկ ինժեներական տեխնիկայի վերանորոգում /Ավտոուղեհարթիչ ԴԶ-122Բ-1 տեխնիկաների վերանորոգման ծառայություններ//	դրամ	1	24000000	Ըստ հայտերի

Ծանոթություն՝ բացվածքը ներառված է **պայմանագրի հավելված 1-ում:**

Հավելված N 2
№ ԳՀԾՁԲ-21-20/2-2 գնման պայմանագրի
N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայությունների անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում	
			3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	**Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ** //Հատուկ ինժեներական տեխնիկայի վերանորոգում /Ավտոուղեհարթիչ ԴԶ-122Բ-1 տեխնիկաների վերանորոգման ծառայություններ//	50531100/503	12000000	24000000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ԱՍԱՆԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Սլացք» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ